ԺՈՐԱ ՍՏԵՓԱՆՅԱՆ
Արժեթղթերի շուկայի վերլուծություն և կառավարում, մագիստրատուրա, 2-րդ կուրս

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ-ՈՒՄ

Հիմնաբառեր. *բարձրագույն կրթություն, ընդունելության ցուցանիշներ, պետական և ոչ պետական բուհեր, դպրոցներ, շրջանավարտներ*

Կրթության ոլորտն առանցքային նշանակություն ունի յուրաքանչյուր երկրի սոցիալ-տնտեսական զարգացման համատեքստում: Անցած երեք տասնամյակների ընթացքում կրթության ոլորտը, ներառելով նաև բարձրագույն կրթությունը, գտնվում էր բարեփոխումների գործընթացում: Բուհերի ընդունելության մակարդակի փոփոխությունը հանգեցնում է ոչ միայն կրթության որակի փոփոխությանը, այլ նաև ազդում է երկրի տնտեսական վիճակի վրա: Հետազոտության ընթացքում ուսումնասիրվել են վերջին տարիներին ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատությունների ընդունելության մակարդակի փոփոխությունը, փոփոխության վրա ազդող գործոնները, վերհանվել են առկա հիմնախնդիրները և ներկայացվել համապատասխան առաջարկություններ դրանց լուծման համար:

Ներածություն: Հայաստանի Հանրապետության կրթության համակարգը բաղկացած է 12-ամյա ընդհանուր միջնակարգ կրթությունից (տարրական, հիմնական և ավագ դպրոց), նախնական և միջին մասնագիտական կրթությունից, բարձրագույն և հետբուհական կրթությունից:

Բարձրագույն կրթությունն իրականացվում է երեք աստիճաններով. առաջինում՝ բակալավրի կրթական ծրագրեր, որոնց ավարտին ուսանողները ձեռք են բերում տվյալ ոլորտի հիմնարար գիտելիք, հմտություններ և կարողություններ՝ ուսումը շարունակելու և աշխատելու նպատակով: Բակալավրի որակավորման համար (ՀՀ ՈԱՇ-ի և Եվրոպական որակավորումների շրջանակի (ԵՈՇ) 6-րդ մակարդակի համապատասխան որակավորում) սահմանված է 180-240 կրեդիտ (առկա ուսուցմամբ երեք կամ չորս տարի տևողությամբ): Բակալավրի ծրագրում ընդունելության անհրաժեշտ պայման է միջնակարգ կրթության (լրիվ) վկայականի կամ միջին մասնագիտական կրթության դիպլոմի առկայությունը:

Ինտեգրված (բակալավրի և մագիստրոսի) ծրագրերն իրականացվում են բժշկական մասնագիտությունների համար, և սահմանված է 300 կրեդիտ (5 տարի) բժիշկ-ստոմատոլոգի և 360 կրեդիտ (6 տարի) բժշկի որակավորումների համար: Ինտեգրված ծրագրում ընդունելության անհրաժեշտ պայման է միջնակարգ կրթության (լրիվ) վկայականի կամ միջին մասնագիտական կրթության դիպլոմի առկայությունը[1]:

Հայաստանի Հանրապետությունում ավանդաբար գոյություն է ունեցել բարձրագույն կրթություն ստանալու հասարակական բարձր պահանջարկ:

[1] Տե՛ս Ակադեմիական փոխճանաչման և շարժունակության ազգային տեղեկատվական կենտրոնի պաշտոնական կայք, https://armenic.am/%D5%AF%D6%80%D5%A9%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6/

Ներկայումս, առավել քան երբևէ, բնակչությունը կրթությունը դիտարկում է որպես նյութական բարեկեցություն, սոցիալական կարգավիճակ, շարժունություն ապահովող հիմնական միջոց[1]:

Մեթոդաբանություն: Հետազոտության նպատակից ելնելով՝ հոդվածում օգտագործվել են համակարգային և համեմատական վերլուծության, դինամիկ հետազոտության մեթոդները:

Աշխատանքի համար տեղեկատվական հիմք են հանդիսացել ՀՀ վիճակագրական կոմիտեի, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության, Գնահատման և թեստավորման կենտրոնի, առանձին բուհերի կողմից հրապարակված պաշտոնական տվյալները, վերլուծական նյութերը, վիճակագրական տվյալների բազաները:

Գրականության ակնարկ: Հետազոտության շրջանակում ուսումնասիրվել է Ա. Ասլանյանի, Մ. Բադալյանի և Ա. Հովհաննիսյանի «ՀՀ բարձրագույն մասնագիտական կրթության շուկայի արդի վիճակը, փոխհարաբերությունները աշխատանքի շուկայի հետ և գնագոյացման հիմնախնդիրները» մենագրությունը: Աշխատանքում հեղինակները վերլուծել են կրթական ծառայությունների գնագոյացման հիմնախնդիրը՝ կրթական ծախսերը դիտարկելով որպես ներդրումներ մարդկային կապիտալում: Դրանից ելնելով՝ կատարվել է բարձրագույն կրթության ֆինանսական ծախսերի նպատակահարմարության հաշվարկ՝ ըստ մասնագիտությունների և մեթոդաբանական երկու տարբերակով: Ներկայացվել են կրթական ծառայությունների և աշխատանքի շուկաների փոխհարաբերության առանձնահատկությունները Հայաստանի Հանրապետությունում, բացահայտվել են հնարավոր զարգացման ուղղությունները:

Ուսումնասիրվել են նաև ԿԵՀ բարձրագույն կրթության վերլուծական կենտրոնի կողմից Լ. Մաթեյի, Յու. Իվինսկայի և Կ. Գևենի «Բարձրագույն կրթությունը Հայաստանում այսօր. առկա խնդիրների վերլուծություն» հաշվետվության մեջ ներկայացված Հայաստանի բարձրագույն կրթության ոլորտի ուսումնասիրության արդյունքները և եզրակացությունները: Ուսումնասիրությունը եղել է նպատակային, վերլուծվել են ոլորտում իրականացվող բարեփոխումները (Հայաստանը 2005 թ. միացել է Բոլոնյան գործընթացին), ինչպես նաև անդրադարձ է կատարվել բարձրագույն կրթության ոլորտի ազդեցությանը բաց հասարակության զարգացման վրա:

Վերլուծություն: Հայաստանի Հանրապետությունում 2021 թ. դրությամբ գործում են 23 պետական բարձրագույն ուսումնական հաստատություններ և դրանց 13 մասնաճյուղեր:

---

[1] Տե՛ս **Ա. Ասլանյան, Մ. Բադալյան, Ա. Հովհաննիսյան**, «ՀՀ բարձրագույն մասնագիտական կրթության շուկայի արդի վիճակը, փոխհարաբերությունները աշխատանքի շուկայի հետ և գնագոյացման հիմնախնդիրները», https://asue.am/upload/files/education-and-science/Aslanyan_A._nor_done.pdf



Գծապատկեր 1. ՀՀ-ում գործող պետական բուհերի և դրանց մասնաճյուղերի շարժընթացը (2010-2021 թթ.)[1]

Առավելագույն քանակով բուհեր գտնվում են Երևանում, իսկ մասնաճյուղերի քանակով առաջատարը Շիրակի մարզն է: Արագածոտնի, Արարատի, Արմավիրի, Կոտայքի, Վայոց ձորի և Տավուշի մարզերում չկան բուհեր, Երևանում, Արագածոտնի, Արարատի, Արմավիրի, Գեղարքունիքի և Կոտայքի մարզերում չկա որևէ բուհի մասնաճյուղ: Այսպիսով, կարող ենք նշել, որ ՀՀ-ում կան մարզեր, որոնք չեն ապահովում մարզի բնակիչների բարձրագույն կրթության իրացումը հենց մարզում, և լրացուցիչ ծախսային բեռ է ավելանում ճանապարհային, որոշ դեպքերում՝ նաև կեցության համար:



Գծապատկեր 2. *ՀՀ-ում նորածինների թվաքանակի շարժընթացը (1990-2020 թթ.)*[2]

Բուհերի ընդունելության ցուցանիշները կախված են տարաբնույթ գործոններից, այդ թվում՝ երկրի սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակից, ժողովրդագրական ցուցանիշներից, ներգաղթի և արտագաղթի ցուցանիշների շարժընթացից, դպրոցների և միջին մասնագիտական ուսումնական

---

[1] Գծապատկերը կառուցվել է ՀՀ վիճակագրական կոմիտեի տվյալների հիման վրա՝ https://armstatbank.am/pxweb/hy/ArmStatBank/ArmStatBank_2%20Population%20and%20social%20processes_22%20Education_226%20Activity%20of%20educational%20institutions%20conducting%20first%20degree%20educational%20programs%20of%20higher%20education/ps-ed-h1pe01.px/?rxid=81264b96-6cae-40f9-8113-bd8b51ea3190

[2] Գծապատկերը կառուցվել է ՀՀ վիճակագրական կոմիտեի տարեկան հրապարակումների հիման վրա՝ https://armstat.am/am/?nid=82

հաստատությունների (ՄՄՀ) շրջանավարտների թվաքանակից և այլն: Դիտարկենք ՀՀ-ում ծնելիության մակարդակի փոփոխությունը:

Հայաստանի Հանրապետությունում, 1990 թ. համեմատությամբ, տեղի է ունեցել ծնելիության մակարդակի անկում, մասնավորապես վերջին 30 տարիների ընթացքում մեկ տարվա կտրվածքով նորածինների թիվը միջինում չի գերազանցում 45000-ը:

Ներկայացվել է նաև ՀՀ դպրոցների և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների (ՄՄՀ) շրջանավարտների շարժը և համապատասխանաբար ՀՀ բուհեր ընդունվածների թվի փոփոխությունը:



Գծապատկեր 3. ***ՀՀ դպրոցների, ՄՄՀ-ների շրջանավարտների և ՀՀ բուհերի ընդունելության շարժընթացը (2012-2020 թթ.)***[1]

Ինչպես երևում է գծապատկերից, 2012-2020 թթ. ընթացքում ՀՀ բուհեր ընդունվածների և ուսումը չշարունակողների թվաքանակները գրեթե հավասար են: Ակնառու տարբերություն ենք նկատում 2017-2018 թթ., որը կապված է ավագ դպրոցների ներդրման և ՄՄՀ-ների զարգացման հետ: Միջինացված կտրվածքով շրջանավարտների շուրջ 46%-ը ուսումը բուհերում չի շարունակում տվյալ տարում, ինչը զարգացող երկրի համար շատ բարձր ցուցանիշ է:



Գծապատկեր 4. ***ՀՀ բուհերում անվճար և վճարովի համակարգ ընդունվածների շարժընթացը (2010-2020 թթ.)***[2]

Հաջորդն ուսումնասիրել ենք պետական պատվերի՝ անվճար ուսուցմամբ ընդունվածների շարժը:

---

[1] Գծապատկերը կառուցվել է ՀՀ վիճակագրական կոմիտեի տվյալների հիման վրա, https://armstatbank.am/pxweb/hy/ArmStatBank/

[2] Գծապատկերը կառուցվել է ՀՀ վիճակագրական կոմիտեի տվյալների հիման վրա, https://armstatbank.am/pxweb/hy/ArmStatBank/

Ուսանողների թվի փոփոխությունը հիմնականում տեղի է ունենում վճարովի համակարգում, ինչից կարող ենք եզրակացնել, որ դիմորդները նախապատվությունը տալիս են ընդունվել այն մասնագիտությունների գծով, որոնք ունեն անվճար տեղեր՝ այդպիսով հրաժարվելով այն մասնագիտություններից, որոնցով ցանկանում են սովորել:



Գծապատկեր 5. ***ՀՀ պետական և ոչ պետական բուհեր ընդունվածների շարժընթացը՝ ըստ ուսումնառության ձևի (առկա և հեռակա), արտերկիր գործուղված ՀՀ քաղաքացիների թիվը և ՀՀ-ում սովորող օտարերկրյա քաղաքացիների թիվը (2010-2020 թթ.)***[1]

Ինչպես երևում է գծապատկերից, դիմորդները նախապատվությունը տալիս են պետական բուհերի առկա ուսուցման համակարգին, և վերջին տարիներին նկատվում է ոչ պետական բուհերի հեռակա ուսուցման նկատմամբ պահանջարկի աճ: Ուսումնասիրելով ՀՀ քաղաքացիների՝ բակալավրական ծրագրով արտերկիր գործուղվածների թիվը՝ կարող ենք նշել, որ այն 2010-2020 թթ. միջինում կազմել է ընդամենը 65 ուսանող (հիմնականում նրանք գործուղվել են Ռուսաստանի Դաշնություն, վերջին տարիներին՝ նաև Չինաստան): ՀՀ-ում ուսումնառող օտարերկրյա քաղաքացիները հիմնականում Ռուսաստանի Դաշնությունից, Վրաստանից, Իրանից, Սիրիայից և Հնդկաստանից են: Առաջին 4 երկրների պարագայում առավելապես հայրենադարձության երևույթն է, իսկ Հնդկաստանի պարագայում՝ ուսման ցածր վարձավճարով մասնագիտությունների գծով սովորելու հնարավորությունը: Այսինքն, կարող ենք ընդգծել, որ ՀՀ բուհական համակարգը մասնագիտական կրթություն ստանալու առումով այնքան էլ գրավիչ չէ օտարերկրյա քաղաքացիների համար:

2021-2022 ուստարում բուհերի ընդունելության համակարգում տեղի ունեցան փոփոխություններ, մասնավորապես՝ ընդունելության հիմնական փուլի ընթացքում դիմորդները պետք է ընտրություն կատարեին «մեկ բուհ,

[1] Գծապատկերը կառուցվել է ՀՀ վիճակագրական կոմիտեի տվյալների հիման վրա, https://armstatbank.am/pxweb/hy/ArmStatBank/

մեկ մասնագիտություն» սկզբունքով[1], ինչի արդյունքում ի հայտ եկան ՀՀ-ում առավել պահանջված բուհերը:

Ստորև ներկայացված է 2021-2022 ուստարվա ընթացքում ՀՀ պետական և ոչ պետական բուհերին հատկացված անվճար և վճարովի, ինչպես նաև հիմնական փուլից հետո թափուր մնացած տեղերի քանակը:

Աղյուսակ 1

2021-2022 ուստարվա ընդունելության արդյունքում պետական բուհերին հատկացված անվճար ու վճարովի և հիմնական փուլից հետո թափուր մնացած տեղերի քանակը[2]

Պետական բուհերը և մասնաճյուղերը	Հատկացված տեղեր		Թափուր տեղեր		Համալր-վածութ. տոկոս
	Անվճար	Վճարովի	Անվճար	Վճարովի	
Երևանի պետական համալսարան	380	2466	10	610	22%
Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղ	41	374	0	176	42%
Հայաստանի ազգային պոլիտեխնի-կական համալսարան	364	909	19	346	29%
Հայաստանի ազգային պոլիտեխնի-կական համալսարանի Գյումրու մասն.	45	63	3	36	36%
Հայաստանի ազգային պոլիտեխնի-կական համալսարանի Վանաձորի մասն.	27	65	1	39	43%
Հայաստանի ազգային պոլիտեխնի-կական համալսարանի Կապանի մասն.	20	46	0	14	21%
Ճարտարապետության և շինարա-ության Հայաստանի ազգային համալսարան	82	1435	29	965	66%
Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան	*60*	*1184*	*0*	*240*	***19%***
Հայաստանի պետական տնտեսա-գիտական համալսարանի Գյումրու մասն.	8	187	0	100	51%
Հայաստանի պետական տնտեսա-գիտական համալսարանի Եղեգնաձորի մասն.	3	57	0	45	75%
Խաչատուր Աբովյանի անվան հայկա-կան պետական մանկավարժական համալսարան	83	1537	7	661	41%
Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան	62	1475	0	475	31%
Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան	69	576	0	245	38%
Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան	56	404	5	124	28%
Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիա	60	169	9	129	60%
Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի Գյումրու մասն.	12	33	12	33	100%

[1] Տե՛ս ՀՀ Կառավարության որոշում, 2021 թվականի ապրիլի 1-ի N 469-Ն, https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=151376

[2] Աղյուսակը կառուցվել է ԳԹԿ-ի կողմից հրապարակվող տվյալների հիման վրա, http://www.atc.am/files/Dimord_2021/lavash_2021_N.pdf և http://www.atc.am/files/Dimord_2021/lavash_2021_tapur.pdf

Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիա	38	289		128	39%
Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիայի Գյումրու մասն.	10	65		44	59%
Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիայի Դիլիջանի մասն.	3	9	0	9	75%
Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտ	46	176		64	29%
Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտի Գյումրու մասն.	9	46	2	29	56%
Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտի Վանաձորի մասն.	3	30		20	61%
Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարան	*91*	*605*	*0*	*23*	***3%***
Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ	55	437	55	72	26%
Գավառի պետական համալսարան	28	347	9	321	88%
Հայաստանի ազգային ագրարային համալսարան	***117***	***899***	***67***	***881***	***93%***
Գորիսի պետական համալսարան	18	198	4	148	70%
Հայ-ռուսական համալսարան (հայկական բաժանմունք)	24	472	1	285	58%
Ընդամենը պետական ԲՈՒՀ-եր	**1814**	**14553**	**233**	**6262**	**40%**

Աղյուսակ 2

2021-2022 ուստարվա ընդունելության ոչ պետական բուհերին հատկացված անվճար ու վճարովի և հիմնական փուլից հետո թափուր մնացած տեղերի քանակը[1]

Ոչ պետական բուհերը և մասնաճյուղերը	*Հատկացված տեղեր*		*Թափուր տեղեր*		*Համալր-վածութ. տոկոս*
	Անվճար	*Վճարովի*	*Անվճար*	*Վճարովի*	
Երևանի «Գլաձոր» համալսարան	2	385	2	383	99%
Երևանի «Գալիք» համալսարան	0	235		235	100%
Ա. Մկրտչյանի անվան տնտեսա-իրավագիտական համալսարան	0	440		440	100%
Երևանի «ՄՖԲ» ֆինանսական ակադեմիա	0	80		79	99%
Երևանի «Հայբուսակ» համալսարան	2	855	2	739	86%
«Հայբուսակ» համալսարանի Գյումրու «Շիրակացի» մասնաճյուղ	0	165		165	100%
Ավանդական բժշկության համալսա-րան	0	120		120	100%
Երևանի «Մենեջմենթի» համալսարան	0	155		155	100%
Երևանի «Հյուսիսային համալսարան»	2	332	2	329	99%
«Մխիթար Գոշ» հայ-ռուսական միջազգային համալսարան	2	355	2	355	100%
«Մարտիգ» արտաքին տնտեսական կապերի համալսարան	0	150		150	100%
Երևանի «ԱԶՊԱԹ-վետերան» դատական փորձագիտության և հոգեբանության ինստիտուտ	0	50		50	100%
Եվրասիա միջազգային համալսարան	2	450		442	98%
Երևանի «Անանիա Շիրակացի»	0	125		125	100%

[1] Աղյուսակը կառուցվել է ԳԹԿ-ի կողմից հրապարակվող տվյալների հիման վրա, http://www.atc.am/files/Dimord_2021/lavash_2021_N.pdf և http://www.atc.am/files/Dimord_2021/lavash_2021_tapur.pdf

միջազգային հարաբերությունների համալսարան					
Երևանի գործնական հոգեբանության և սոցիոլոգիայի «Ուրարտու» համալսարան	0	100		100	100%
Հրազդանի հումանիտար ինստիտուտ	0	120		120	100%
Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան համալսարան	*0*	*170*		*138*	*81%*
Երևանի գյուղատնտեսական համալսարան	*0*	*110*		*80*	*73%*
Երևանի Մովսես Խորենացու անվան համալսարան	0	300		300	100%
Վարդենիսի մանկավարժական ինստիտուտ	0	75		75	100%
Հայկական բժշկական ինստիտուտ	0	160		133	83%
Գյումրու «Պրոգրես» համալսարան	0	310		279	90%
Երևանի մշակույթի համալսարան	0	45		45	100%
Սուրբ Թերեզայի անվան համալսարան	0	340		340	100%
Եվրոպական համալսարան	0	1220		1069	88%
Եվրոպական համալսարանի Գյումրու մասնաճյուղ	0	300		299	100%
Եվրոպական համալսարանի Վանաձորի մասնաճյուղ	0	230		228	99%
Եվրոպական համալսարանի Իջևանի մասնաճյուղ	0	220		220	100%
Ընդամենը ոչ պետական բուհեր	*10*	*7597*	*8*	*7193*	*95%*

Ինչպես երևում է աղյուսակներից, տվյալ որոշումից հետո պետական ոչ մի բուհ չի ունեցել ամբողջությամբ համալրում, նվազագույն թափուր տեղեր են ունեցել ԵՊԲՀ-ն և ՀՊՏՀ-ն, առավելագույնը՝ ՀԱԱՀ-ն: Այլ պատկեր է ոչ պետական բուհերի դեպքում, առավելագույն համալրում արձանագրվել է 27%-ի չափով, 16 բուհ ընդհանրապես չի ունեցել համալրում:

Ինչպես երևում է գծապատկեր 6-ից, ՀՀ պետական բուհերի պահանջարկի հետ միաժամանակ իրականացվում են սոցիալական օժանդակության միջոցառումներ, մասնավորապես՝ բուհերը, հավաքագրելով ուսման վարձերը, դասախոսների և աշխատակիցների աշխատավարձերի վճարմանը զուգընթաց, եկամտային հարկն ուղղում են դեպի պետական բյուջե, կատարում շահութահարկի վճարում, այսինքն՝ բուհերը ոչ միայն ապահովում են ուսանողների ուսումնառությունը, այլ նաև նպաստում են պետական բյուջեի եկամուտների համալրմանը:

2022 թ. հունվարի 5-ին ՀՀ ԿԳՄՍ նախարարությունը մշակել է պետական և ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների ընդունելության (ըստ բակալավրի ու անընդհատ և ինտեգրված կրթական ծրագրերի) կարգում փոփոխություններ կատարելու նախագիծը[1], համաձայն որի՝ դիմորդները կարող են միասնական քննություն հանձնել մեկ տարվա մեջ 2 անգամ, ինչը, մի կողմից, կնպաստի բուհերի ընդունելության մակարդակի բարձրացմանը, մյուս կողմից՝ կհանգեցնի մեկ անգամ քննությունը չհաղթահարած դիմորդներին երկրորդ հնարավորության տրամադրմանը, որը կարող է բացասաբար անդրադառնալ բուհեր ընդունվածների մակարդակի վրա:

[1] https://escs.am/am/news/11223



Գծապատկեր 6. ***ՀՀ 11 պետական բուհերի կողմից հավաքագրված ուսման վարձերի, վճարված աշխատավարձերի և շահութահարկերի շարժընթացը 2019-2020 թթ.***[1]

Պետական վերահսկողության հետ կապված մեկ այլ խնդիր էլ դիտարկելի է նորմատիվ իրավական դաշտում: Ոլորտը կարգավորող օրենսդրական դաշտը և՛ չափից ավելի իմպերատիվ է, և՛ հավակնոտ (իսկ դրույթներն ու ակտերը երբեմն հակասում են միմյանց): Գործող օրենսդրությամբ փորձ է արվում կարգավորելու գրեթե յուրաքանչյուր բուհական գործառույթ՝ սկսած ուսումնական ծրագրերի մշակումից ու հաստատումից մինչև կադրերի կառավարում, ընդունելությունից մինչև բյուջեի մշակում և ֆինանսների կառավարում[2]:

Եզրակացություն: Կատարված ուսումնասիրությունների հիման վրա կարող ենք եզրակացնել.

- դպրոցների և ՄՄՀ-ների շրջանավարտների շուրջ 46%-ը չի շարունակում ուսումը բուհում,
- ՀՀ բուհերը գրավչություն չեն ներկայացնում օտարերկրյա քաղաքացիների համար,
- ՀՀ ոչ պետական բուհերը համապատասխան գրավչություն չեն ապահովում դիմորդների շրջանում,

[1] Գծապատկերը կառուցվել է բուհերի տարեկան ֆինանսական հաշվետվությունների հիման վրա:

[2] «Բարձրագույն կրթությունը Հայաստանում այսօր. առկա խնդիրների վերլուծություն», ԿԵՀ բարձրագույն կրթության վերլուծական կենտրոն, Բուդապեշտ, հուլիս, 2013 թ., https://www.moj.am/storage/uploads/00.Ardir_10.pdf

- ՀՀ մարզային կտրվածքով կան մարզեր, մասնավորապես՝ Արագածոտն, Արմավիր, Արարատ, Կոտայք, որտեղ չկան պետական բարձրագույն ուսումնական հաստատություններ, ինչն ամենևին չի նպաստում մարզի սոցիալ-տնտեսական, կրթական, մշակութային զարգացմանը,
- ՀՀ-ում ավագ դպրոցներում ներդրված մոդելը չի ծառայում իր նպատակին և չի նպաստում աշակերտների՝ առանց լրացուցիչ պարապելու բուհ ընդունվելու գործընթացին:

Առկա հիմնախնդիրների հաղթահարման համար անհրաժեշտ է.

- իրականացնել դպրոցական ծրագրերի մշակում և բարեփոխում՝ խթանելու համար աշակերտների՝ ուսումնառությունը շարունակելու ցանկությունը,
- խիստ պահանջներ սահմանել ոչ պետական բուհերի նկատմամբ, ոչ պետական բուհերն առավել գրավիչ դարձնելու քաղաքականություն մշակել, սահմանափակել չպահանջված բուհերի գործունեությունը,
- իրականացնել ՀՀ բուհերի կրթական ծրագրերի համապատասխանեցում միջազգային չափանիշներին, իրականացնել օտար լեզվով ուսումնական գործընթացի կազմակերպում օտարերկրյա դիմորդների համար, աջակցել բուհերի միջազգային վարկանիշի բարձրացմանը, ինչն էլ իր հերթին կնպաստ ի օտարերկրյա դիմորդների ներհոսքին,
- իրականացնել առավել քիչ պահանջված, սակայն պետական նշանակություն ունեցող մասնագիտությունների կրթական ծրագրերի բարեփոխման աշխատանքներ, տրամադրել լրացուցիչ անվճար տեղեր այդ մասնագիտությունների ընդունելության համար, այսպիսով նպաստել դիմորդների շրջանում տվյալ մասնագիտության պահանջարկի բարձրացմանը և կայացմանը:

Օգտագործված գրականության ցանկ

1. Հայաստանի Հանրապետության պետական և ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատություններ ընդունելության կարգ՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=151376
2. ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության պաշտոնական կայք՝ https://escs.am/, հրապարակումներ և հայտարարություններ:
3. «Բարձրագույն կրթությունը Հայաստանում այսօր. առկա խնդիրների վերլուծություն», ԿԵՀ բարձրագույն կրթության վերլուծական կենտրոն, Բուդապեշտ, հուլիս 2013 թ., https://www.moj.am/storage/uploads/00.Ardir_10.pdf, Լիվիու Մաթեյ, Յուլիա Իվինսկա և Կուն Գևեն:
4. Ասլանյան Ա., Բաղալյան Մ., Հովհաննիսյան Ա., ՀՀ բարձրագույն մասնագիտական կրթության շուկայի արդի վիճակը, փոխհարաբերությունները աշխատանքի շուկայի հետ և գնագոյացման հիմնախնդիրները, https://asue.am/upload/files/education-and-science/Aslanyan_A._nor_done.pdf
5. Գնահատման և թեստավորման կենտրոնի պաշտոնական կայք, http://www.atc.am/, բուհերի ընդունելության տեղերը, պայմանները, թափուր մնացած տեղերը:
6. ՀՀ վիճակագրական կոմիտեի պաշտոնական կայք, https://armstat.am/, վիճակագրական տեղեկագրեր, տվյալների բանկ, բնակչություն, կրթություն:
7. ՀՀ պետական և ոչ պետական բուհերի կայքեր, ընդունելության տվյալներ, տարեկան ֆինանսական հաշվետվություններ:

8. Ակադեմիական փոխճանաչման և շարժունակության ազգային տեղեկատվական կենտրոնի պաշտոնական կայք, https://armenic.am

ЖОРА СТЕПАНЯН
Анализ и управление рынка ценных бумаг, магистратура, 2-ой курс

ИЗМЕНЕНИЕ УРОВНЯ ПРИЕМА В ВЫСШИЕ УЧЕБНЫЕ ЗАВЕДЕНИЯ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

Ключевые слова: *высшее образование, коэффициент приема, государственные и частные вузы, школы, выпускники*

Образование имеет решающее значение в контексте социально-экономического развития страны. За последние три десятилетия сфера образования и высшее образование в Республике Армения претерпели множество реформ. Изменения в приеме в вузы приводят не только к изменению качества образования, но и влияют на экономическую ситуацию в стране. В исследовании рассматриваются изменения показателей приема в вузы Армении, факторы, обусловившие эти изменения. Выявлены проблемы в системе высшего образования Армении и пути их решения.

ZHORA STEPANYAN
Securities Market Analysis and Management, Master Degree, 2nd Year

CHANGE OF ADMISSION LEVEL IN HIGHER EDUCATION INSTITUTIONS IN THE REPUBLIC OF ARMENIA

Key words: *higher education, admission rates, public and private universities, schools, graduates*

Education is vital in the context of a country's socio-economic development. During the last three decades the education sphere and higher education in the Republic of Armenia have faced many reforms. The changes in university admission lead not only to the changes in the quality of education but they also affect the economic situation in the country. The research covers the changes in Armenian universities admission rates, the factors leading to the changes. Issues in the Armenian higher education system have been revealed with their possible solutions.

ԹԵՐԵԶԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ
Տնտեսագիտություն, բակալավրիատ, 2-րդ կուրս

«ՍԵՎ ԿԱՐԱՊԻ» ՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀՀ ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ

Հիմնաբառեր. *«սև կարապ», անկանխատեսելի, անակնկալ իրադարձություն, կորոնավիրուս, կենսամակարդակ, մակրոտնտեսական ցուցանիշներ*